Հայոց կաթողիկոս ընտրուած է 1603ին և վախճանած է Ամիդի մէջ 1606 Ապրիլ 23ին (Թորոս Աղբար, Բ. էջ 419)։

ՍՐԱՊԻՈՆ ՎՐԴ. ՊՈԼՍԵՑԻ.— Մբ. Ցշտկրն.ի մը մէջ իր մասին կը կարդանք հետևեալը. «Ի Զէյթին ձեռնադրեալ, և սևամաղձութենէ կալեալ՝ արկ զինքն գիշերայն ի տանեաց ի վայր» (1844)։

ՍՐԱՊԻՈՆ ՎՐԴ. ՎԱՆՑԻ.— Մբ. ՏԴ. 1860ին։

ՍՐԲՈՒՀԻ ՄՊ. ԱՊՈՒՋԵԽՑԻ.— 1801ին Ս. Ց. վանքին կը նուիրէ մարգարտայեռ սև թաւիշէ գեղեցիկ սաղաւարտ մը (Ցուց. Պ.)։

ՍՐԲՈՒՀԻ ՄՊ. ՆՇԱՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ, ԳԱՐԹԱԼՑԻ.— (1822 — ✠ 1889). դուստր Բալուցի Զորպաճի Նշան Գալֆայեանի, 1840ին կ'ընդունի մայրապետական քող. իբր վարպետ Օյսի, Տիվաղի և աղրմայի 1850ին Խասգեղի մէջ արհեստանոց մը կը բանայ։ 1858ին Եուսուֆեան Գէորգ պէյի կնոջ հետ կ'ուղեւորի Եգիպտոս և Իտալիա, երկու անգամ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, յետոյ Ցունաստան կ'երթայ և կը վերադառնայ Պոլիս։ 1865 յուլիս 5ին կը բանայ Գալֆայեան աղջկանց Որբանոցը առժամեայ շէնքի մը մէջ, 1870ին իր որբանոցին ի նպաստ կը յատկացուի պետական հաց և միս, 1871ին կը գնէ Տաքէսեանց տունը, ուր կը փոխադրուի որբանոցը.

Սրբուհի մպ. 1870ին կ'ուղեւորի Կովկաս, և Ս. Էջմիածնի մէջ ներկայ կ'ելլայ միւռոնօրհնութեան հանդէսին։ Կը վախճանի 1889ին և կը թաղուի իր հիմնարկած որբանոցի մատրան մէջ։ Իր մահուանէ երկու տարի վերջ կը կատարուի իր ազգօգուտ հիմնարկութեան 25 ամեակը։ Տեսնել իր ընդարձակ կենսագրութիւնը (Արձագանգ. 1890, Թ. 20)։

ՍՕՂԲԱԹ (ՄՀՏ.).— Քրձ. ՌՂԲ (= 1643)ին Ս. Ծննդեան վանքին յիշատակ կուտայ Աւետարան մը (ՄՁ. Թ. 1966), որուն յիշատակարանէն իր մասին կը քաղենք հետևեալը. «... ուստի տեսեալ զսորայս փրկագործութեան խորհուրդ հաւատարիմ քրիստոնեայն Սօղբաթ մահտասին, որ է սպասաւոր սբ. Եէմյ. և ցանկացող եղև այսմ լուսազարդ սբ. աւետարանիս և ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց մղտեսի Սօղբաթ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն հօրն Սաղիեարին և Հերեկին և կողակցին իւրոյ... և ետ զսա յիշատակ ի սբ. Երսղմ. ի զուռն սբ. Ծննդեան (Խաչ. Ցուց. տետր. ԺԱ. էջ 854—857)։